

792(47.925)

9-96



11 2 NOV 2011

792 (47.925)

9-96

ԳՐԱԴԱՐԱՆ

9-87

ՀԱՄԱՌՕՏ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԳՈՒՄԲԱՍԵԱՆԻ

(Ծննդ Ծագիկան)

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԳԵՐԱՍԱՆՈՒՀԻ

Հ Ա Յ Բ Ե Մ Ի Ն

Ե Ի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԱՏՐՈՆԻՆ



Կենսագրեց իր հարազատ որդիին ԳՐԱՐԱՆ

ՍԱՆԱԳՐՈՒԿ Յ. ԳՈՒՄԲԱՍԵԱՆ

1909

ՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Կ. ՊՈՒԽ

27 MAR 2013

13438

6733

92 (177 375) 48

9-30




50192  
8001

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԳՈՒՄԲԱՍԵԱՆ

(Ծնեալ Ծաղիկեան)

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԳԵՐԱՍԱՆՈՒՀԻ

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԹԱՏՐՈՆԻ



# ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՄԱՐԻԱՄ Յ. ԳՈՒՄԲԱՍԵԱՆԻ

ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԱՏՐՈՆԻ



Մարիամ Ծաղիկեան, ծնեալ ի Կ. Պոլիս, Բերա, 1831ին, դուստրն է Օսմանեան Արքային ծաղկագործապետ (Չիչէքճի սպաշը) Գալուստ Աղայի: Իր մայրն էր տիկին Ֆուլիկ Գալուստ Ծաղիկեան, որ 20 տարեկան ծաղիկ հասակին մէջ իր երեք անչափանաս զաւակներով այրի կը մնայ: Տիկին Ֆուլիկ, որ ճշմարիտ որդեսէր մայր մ'էր, սարազայից բերձամբ իր ամուսնոյն թողած նիւթական կը փճացնէ, և կը ստիպուի իր երեք անմեղները, Աբրահամ, Մարիամ և Բիստոս (Օսմ. չաքարագործ Հաճի Սարի:ի կ[ի]նը), սնուցա-

նել իր աշխատութեամբ: Նախ կը ստանձնէ  
Կէօչէ Օղլու Յակոբ Էֆէնտիին զաւակացը  
կաթնատուութեան պաշտօնը: Մի քանի տա-  
րիներ վերջ, Կէօչէ Օղլու, որ բոլոր սրտովը  
համակրած էր տիկին Ֆուլիկի՝ անոր հեղա-  
համբոյր բնութեանը պատճառաւ, իր տան  
մէկ անդամը նկատելով զայն, անոր կը  
յանձնէ անտեսուելութեան (վեֆլիխարձի)  
պաշտօնը, միևնոյն ժամանակ ամէն կերպով  
խնամել տալով Տիկին Ֆուլիկի երեք անչա-  
փահաս որբերը թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւ-  
թապէս: Տիկին Ֆուլիկ մեծ հոգածութիւն  
կ'ունենայ իր Արրահամ տղուն կրթութեան,  
իսկ սա աւիթէն չօլտուելով, մի միայն  
կառքերու ոսկեղօճողի և ներկարարի ար-  
ուեստները կ'ուսնի, և երբ հափահաս կ'ըլ-  
լայ, լքելով իր մայրն ու քոյրերը, եզիպ-  
տոս կը հաստատուի:

Մարիամ Ծաղիկեանի բեղմնաւոր կեանքը  
կը սկսի 1851ին: Ըստ բաւականին ուսման  
հետեւելով՝ լաւ կը խօսի ու կը գրէ հայերէն,  
յունարէն, իտալերէն, թրքերէն: Առաջին  
անգամ՝ իր մօրը նիւթապէս օգնելու և զա-  
նիկայ օտարներու ծառայութենէն ազատելու  
համար՝ իրր ուսուցչուհի կը պաշտօնավարէ

Ազգին երեւելեաց և ամիրաներու տուները:  
1858ին կը նշանուի և կ'ամուսնանայ Պիլէ-  
ճիքլի Օղլու Յովսէփ Գումբասեանի հետ, և  
կ'ունենայ երկու զաւակ: Առաջինը, Օր. Վեր-  
ժին Գումբասեան, որ Վերժին Ծաղիկեան  
անունով ծանօթ է Հայ Ազգին, իր մօրը  
նման երկա՛ր ատեն իբր դերասանուհի պաշ-  
տօն վարած է Ֆասուլիաճեան, Մնակեան և  
այլ խումբերու մէջ: Տիկին Մարիամ Ծաղիկ-  
եան, հետատես տխար մայր մը, իր զա-  
ւակներուն ասպագան խորհելով և գիտնալով  
դերասանութեան ասպարէզին ալ ասպարիս-  
տութիւնը, կը մտադրէ յարմար առթիւ մը  
փրկել իր սիրեցեալ դուստրը այս ասպարէ-  
զէն: Իրօք ալ 1883ին կը յաջողի իրեն փե-  
սայացնել զարգացած երիտասարդ մը, դե-  
զագործ և դեղալաճառ Գարբիէլ էֆ. Թօ-  
գատլեանը, և այսպիսով կը կազմէ իր սի-  
րեցեալ ազջկան ասպագան: Իսկ գալով երկ-  
բորդ զաւակին՝ Սանատրուկ Գումբասեանի  
(գպրոցական անունով Գրիգոր Ծաղիկեան),  
կը յաջողի 1880ին Երուսաղէմայ ժառանգա-  
ւորաց վարժարանը զրկել զայն, որ հոն իր  
ուսումը առնելէ յետոյ՝ կը պաշտօնավարէ  
Միացեալ Ընկերութեան վարժարանաց մէջ

ի դաւանոս, և 1894էն ի վեր ալ մայրաքաղաքիս մէջ կը պաշտօնավարէ իբր Ազգային ուսուցիչ:

Մարիամ Ծաղիկեան 1862 Մայիս 5ին, իրմէ մի քանի ամիսներ առաջ բեմ ելնող Տիկին Արուսեակին և Էջեանի ընկերակցութեամբ բեմ կը բարձրանայ և Պոլսոյ ընդհանուր ժողովրդեան համակրութեան կ'արժանանայ: Ազգային երևելի ջոջերն իսկոյն միանալով, ժողով կը գումարեն և կ'որոշեն, առաջին՝ հոգալ թատրոնի բոլոր ծախքերը, երկրորդ՝ հրաւիրել Եւրոպայէն մեծ արդիւններ, բեմին վարժեցնելու համար Հայոց նոր դերասանուհիները: Երրորդ՝ քերել Իտալացի նշանաւոր ձայնադրագէտ երգիչ դասատուներ, երգախառն տրամներու յաջողութեան համար: չորրորդ՝ կանգնել նշանաւոր դեղեցիկ թատրոններ մայրաքաղաքիս զանազան կողմերը: հինգերորդ՝ հոգալ թատրոնի, թատերգութեանց և զգեստներուն բովանդակ ծախքերը:

Եւ իրօք ալ կը յաջողին ի դործ դնել իրենց այն բազմածախս ծրագիրը: Այս թուականին կը ծաղկին Պոլսոյ դերասանական խումբերը, Էջեան, Վարդովեան, Ֆա-

սուլեանճեան, Մնասկեան, Թոսպաթեան, Պէնլեան, Մաղաքեան, Տիկին Արուսեակ, Տիկին Ծաղիկեան, Օր. Վերթին և Բուրուլ Գարազաշեան, և այլն, և այլ կարգ մը դերասաններ ու դերասանուհիներ: Ծաղիկեան վերոյիշեալ խումբերուն մէջ առաջին դերասանուհիի պաշտօնը յաջողապէս կը վարէր, նոյն իսկ Եւրոպացի իր ուսուցիչներուն հիացում պատճառելով իր բնատուր յատկութիւններովը: Նոյն միջոցին մեր Ազգային արքայական խաղերը արգիւլելու համար պալատական աւագանիէն ոմանք, Խասգիւղի արեւելեան թատրոնը մէկ գիշերուան մէջ կը կործանեն: Տիկին Ծաղիկեան այս ցաւալի տեսարանին հանդէպ՝ անզգայ չի մնար: Երբ կը տեսնէ թէ նշանաւոր դերասաններ, ինչպէս Էջեան և այլք, իրենց օձիքը կառավարութեան ձեռք չի տալու համար, Պօլիսէն հեռանալով՝ զաւանները շունչերնին կ'առնեն, իսկոյն կը միանայ Բերայի մէջ հանրածանօթ և մեծահարուստ Նահումի հետ, Ալքաղաբը Արեւելեան թատրոնի տեղ չինել կուտայ, և Եւրոպական հպատակ Նահումի հովանւոյն տակ կը սկսի բոլոր արգիւլուած Ազգային տրամները ներկայացնել, և հետզհետէ երկիւղով

փախուստ առող զերասաններ ալ իր քով հրաւիրելով. կը շարունակէ իր դերը իրր առաջին զերասանուհի: Տիկին Մարիամ Ծաղիկեան թէև բարձր ուսում չունէր, սակայն այն ժամանակին մէջ ուսեալ կին մը կը համարուէր բոլոր սուլտանակ Ազգայիններէն: Մանաւանդ իր համարձակութիւնը նշանակելի է, քանի որ այն ժամանակին մէջ զերասանութիւնը մահացու մեղք մը կը համարէին բոլոր Ազգային անհատները և անպատուութիւն մը կը նկատէին զայն: Սակայն յիշատակութեան արժանի հանգուցեալ Ծաղիկեան Մարիամը այս ամէն նախապաշարունակները եւ ոամիկ գաղափարները ոտնակոխ քննելով, հաստատուն նպատակով մը իր բեմէն սկսաւ բարոյական դասերը աւանդելու ժողովրդեան, և այսպէսով բացաւ Հայ Ազգին աչքերը: և լուսաւորեց: Առ այս իր յանդգնութիւնը շնորհաւորելի է մինչև ցայսօր և գնահատելի թէպէտ բարձր գիտութեանց չ'ը հետեւած, սակայն դերասանական սահմանին մէջ մեծամեծ ծառայութիւններ մատուցած է Ազգին: Միջագիւղցիք իրենց սրտերուն մէջ ցարդ վառ պահած են Տիկին Ծաղիկեանի գմայլելի և եղական

ձայնը՝ տրամներուն մէջ: Ազգային երգերուն և Օրերաներուն մէջ ալ իբր երոպացի երգիչ ունեցած բնատուր ձիրքերը և յատկութիւնները կը յիշեն ցարդ և կը յուզուին: Թէպէտ և անուրանալի ճշմարտութիւն մ'է որ, այս յաջողութիւններուն համար, ինչպէս վերադրուած է, յատուկ իտալիայէն վարպետներ գալով զբոժնական երաժշտութեամբ մարդած էին հանգուցեալը: Այս միջոցին Երոպայի թերթերուն մէջ եղած հրատարակութիւններէն անուասիկ նմոյշ մը.

« Հայ ազգին մէջ զերասանութեան ճիւղը ծայր տուաւ: Այս ազգը ամէն յատկութիւններուն հետ ունի նաև կատարեալ բեմասացական յատկութիւնները: Ո՞վ է Մարի Ծաղիկեան. Ազգին Անդրանիկ զերասանուհին հանդիսացած է նա. մեր առաջին բեմասացներու կարող դասուելու արժանի տիկին մ'է, որ պատիւ կը բերէ իր պատկանած Ազգին, ևն. ևն»:

Հանգուցեալը: Ազգային տրամներուն աւելի սիրահար էր. երգախառն տրամները շատ ու շատ կը սիրէր. իր սիրելի թատերերգութիւններն էին «Թաթարաց Արչաւանք ի Սասուն» և կամ «Մահ կատարինէ

գիւցազնուհայն, «Մեծն Տրդատ», «Սան-  
գուխտ կոյս», «Արշակ Բ.», «Վարդանանց  
Պատերազմն», ևն. : Այս խղճալի տրամե-  
րուն մէջ երբեմն յետագայ երգը կ'երգէր.  
ինքն ևս յուզուելով.

«Ո՛ր, փսմնիկ ոսկերի իմ,  
Հեգ եւ յուսար, ո՛ր Հայաստան,  
եւ յար աղիք իմ գայարի,  
Զի հասի դուռն անյուտառեան:  
եւ այլն, եւն. » :

Աւելորդ է աստանօր յիշել թէ նոյնչափ  
կը սիրէր օտար ազգաց թատերական տրամ-  
ներէն մի քանին, ինչպէս «Մօնթէնեօ»ն,  
երգախառն տրամ մը, որուն մէկ երգը մին-  
չեւ իր մահուան մօտ օրերը կ'երգէր : Ըն-  
թերցողին կը նուիրեմ այս երգին քանի մը  
սողերը.

«Ո՛ր դու աստղ գիշերոյ,  
Ո՛ր բարեւար փայտիկ յայս,  
Քու օգնորիսն ինդրերու  
Գերեզմանես կ'եղլեմ դուս.  
Ա՛խ, սիրադրուծ անյարգ մը,  
Խարես դժբախդ սիրունիս :

Այն արեւակ սիրելի է միակ  
Պատանա թոր աղէտիցս.  
Ո՛ր դու աստղ գիշերոյ,  
Հանգիստ շնորհե՛ք թշուառիս.  
Ա՛խ, սիրադրուծ անյարգ մը,  
Խարես դժբախդ սիրունիս» :

Տիկին Ծաղիկեան իր շահէն աւելի կը սի-  
րէր յարգել Ազգին շահը : Շատ անգամներ  
ինքն ատանձին և անձնական ծախքովը մեծ  
խումբեր կը կազմէր և նպաստներ կը սար-  
գէր Ազգային հաստատութիւններուն համար :  
Իր ներկայացումներէն յաճախ նպաստաւոր-  
ուած են Ազգային Հիւանդանոցը, Խառփուղի,  
Օրթագիւղի, Խոսկիւտարի, Սամաթիոյ և  
Բերայի վարժարանները, ևն. ևն. : Տիկին  
Մարիամ, ինչպէս վերագրեցի, 1862 ին բեմ  
կը բարձրանայ և 1884 ին կը հրատարի,  
տեսնելով անկումը թատերական ասպարէ-  
զին, որով 22 երկա՛ր տարիներ Ազգին իբր  
բարր ուսուցչուհի մը ծառայած է :

Վերջին երեք տարիները, մէկ կողմէն  
ձերութիւն, միւս կողմէն իր հիւանդութիւնը  
չատ ու շատ նեղեցին զինքն : Վերջապէս  
1909 Յունուար 10, չարաթ օր առաւօտուն

աւանդեց իր հոգին առ Աստուած, ինչպէս որ  
օրը օրին մահազոյլ ծանուցուեցաւ Հայ ժո-  
ղովրդեան, և նոյն օր մեռելական կառքով  
փոխադրուեցաւ Ս. Երրորդութեան եկեղեցին:

Յուզարկաւորութեան տխուր արարողու-  
թիւնը տեղի ունեցաւ, ինչպէս որ որոշուած  
էր, ԲՅ օր ժամը Տ ին, նախագահութեամբ  
Քարողիչ Տէր Հմայեակ Սրբազան հօր և Ա-  
րիստակէս Սրբազան վանքեանի: Ներկայ  
էին Բերայի բովանդակ քահանայից դասը և  
դպիրներ: Եկեղեցւոյն բոլոր ջահերն և սուրբ  
սեղանը լուսավառուած էին: Հակառակ օդին  
սաստկութեան, հարիւրաւոր անձեր փութա-  
ցած էին իրենց վերջին յարգանքը մատուցա-  
նելու հանգուցեալին: Ներկաներուն մէջ  
կը նշմարուէին բժիշկներ, վաճառականներ,  
Ուսումնական Խորհրդոյ անդամներ, գերա-  
սաններ և իր բարեկամները: Արարողութիւն-  
ներէն ետքը երկրորդ կարգի մեռելական  
կառքով և հետեւակ կառքերով հանգուցեալոյն  
մարմինը փոխադրուեցաւ Շիշլիի Աղգ. գե-  
րեզմանատունը:

Յուսելով կը յայտնենք սակայն թէ Բե-  
րայի պատուարման Թաղ. Խորհուրդը թէև  
յուզարկաւորութեան համար հարկ եղած պա-

տիւը ընծայած էր, բայց չգիտենք թէ Բ<sup>ո</sup>նչ  
նկատումներով այս մեծ դերասանուհին հա-  
մար մի քանի կանգուն հող չէ յատկացուցած  
մասնաւորաց յատուկ մասին մէջ և հասարա-  
կաց մէջ ամփոփուած է հայ դերասանութեան  
պարծանք կնոջ մը մարմինը: Կը յուսանք որ  
այս աչքառու կէտը նկատի առնելով Պատ.  
Խորհուրդը, պիտի բարեհաճի անոր և իր  
որդւոց գերեզմանատեղին մասնաւորել, դո-  
հունակութիւն պատճառելու համար թէ՛  
երկա՛ր տարիներ Աղգին ծառայող որդւոց և  
թէ՛ Հայ հասարակութեան: Հարուստը իր  
արժանեաց համաձայն տեղ մը կ'ունենայ իր  
նպաստած ոսկիներով, իսկ գրական կեան-  
քին ծառայող մշակները անուշադէի պիտի<sup>օ</sup>  
մնան և անոնց յիշատակը հուսկ յետոյ պի-  
տի կորնչի<sup>օ</sup>: Մի քանի թատերասէր անձեր  
կը փափաքին ողբացեալ յայդիկեանի վրայ  
տապանաքար մը գետեղել, պայմանաւ որ  
նախ Բերայի Պատ. վարչութիւնը բարեհաճի  
գերեզմանատան մէջ մասնաւոր Թաղ մը  
յանձնել Արեւելեան թատրոնի առաջին դե-  
րասանուհին և Գումբասեան գերզաստա-  
նին:

Հանգուցեալը Հայ Աղգին մէջ առանց

ամենափոքրիկ բեռ մը եղած ըլլալու ապրած  
ու վախճանած է, վայելելով իր հարազատ  
որդւոյն խնամքը մինչև ցմահ:



99

ՀՀ Ազգային գրադարան



NL0300798

